

ՎԵՐԺԱՐԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍՈՂՈՒՄ

ՆԱՅԵՄԲԵՐ

1882 Ս. ՏԵՐԻ

№ 4

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՔԻՈՒԹ

Չմեռն էր. գիշերը երկար: Դիւլնազ տատը՝ գլուխը բուրտու վրայ դրած՝ ննջում էր: Երեխայքը վրայ թափուեցան, քունը փախցրին, որ իրանց համար մի հէքիտի տաի: Նա էլ սկսեց—

«Ելել է չի էլել մի սիրուն արտատիկ. կտուցը սուր՝ մեր Արշակի քթի նման. բմբուլը խուճուճ՝ Տիգրանի մազերի նման. թևերը փափրիկ՝ Եղիշի կռների նման: Ահա այսպէս սիրուն էր արտատիկը:»

— Բա ինչ նման ոչինչ չունէր, տապ վանին:

— Բա ի՞նչ, ճաշն սաւեց Հռիփսիկը:

— Ինչ էլ չտեսցիր, տատի, լաց էլաւ Նապիկը:

— Սպասեցէք, սպասեցէք, երեխէք, դեռ չեմ վերջացրել. ամէնքիկ էլ բաժին կը տամ, ասեց տատը և շարունակեց.

«Ալիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս, Վանի, քո աչքերը: Կոստան այնպէս կարմիր էր, ինչպէս, Հռիփսիկ, քո թշերը: Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս, Նապիկ, քո մատները:»

— Ես ոտները չեմ ուզում, ասաց Նազիկը:

— Լաւ, ոտները թող մնայ. տոտիկները կուզեն:

— Չեմ ուզում, տոտիկներն էլ չեմ ուզում:

— Բա ի՞նչը կուզես, Նազիկ:

— Ես աչիկներն եմ ուզում:

— Աչիկներն ինձ է տուել տատը, քեզ չեմ տալ, գոչեց Վանին:

— Նազիկ, կուզեն՝ կատարը դ՛ու վեր առ, տոտիկները Ես կը վերցնեմ, ասեց Հռիփսիկը:

— Չեմ ուզում. ես աչիկներն եմ ուզում:

— Վանի, դու կատարը վերցրու, ես տոտիկները, իսկ Նազիկը՝ աչիկները:

— Ի՞նչ եմ անում կատարը. ում ինչ որ տուել է, այն է նրանը:

— Ճշմարիտ է ասում Վանին, ամէն կողմից գոչեցին երեխայքը:

Նազիկը գոհ չը մնաց, և վէճը երկար շարունակվեց: Բայց տատը չէր լսում. նա գլուխը դրել էր բարձին և քնել: Ել չէին կարող զարթեցնել: Վեր կացան իրանք էլ մտան տեղերը:

Միւս երեկոյին երեխայքն էլի հաւաքուեցան տատի մօտ, որ շարունակի հեքիաթը: Նա էլ սկսեց—

«Անցած գարնանը մեր պարտէզումը ժի սիրուն կրկու կար: Մէկ անգամ ես նստած էի ծառի տակին, և դուք մէկ մէկ եկաք ինձ մօտ:

Արշակը ներս մտաւ, կրկուն կանչեց՝ «կ՛ուկ—կ՛ուկ»:

Եկաւ Շողիկը, ասեց՝ «պ՛ուպ—պ՛ուկ»:

Եկաւ Տիգրանը՝ ասեց՝ «գ՛ուգ—գ՛ուկ»:

Եկաւ Վանին, ասեց՝ «գ՛ուգ—գ՛ուկ»:

Եկաւ Հռիփսիկը, ասեց՝ «բ՛ուբ—բ՛ուկ»:

Եկաւ Նազիկը, կրկուն էլ ոչինչ չասեց, թռաւ գնաց...

— Օ՛խ, օ՛խ, Նազիկ, օ՛խ, օ՛խ, կրկուն քեզ համար ոչինչ չի ասել,—միաբան գոչեցին երեխայքը:

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչո՞ւ կը կուռն իր համար ոչինչ չի ասել. սկսեց լաց լինիլ: Տատը նրան ասեց.

— Նազիկ, գիտե՞ս ինչո՞ւ կը կուռն քեզ համար բան չասեց. նա վախեցաւ քեզ բան ասել: Ինչ որ ասէր, դու չը պիտի հաւանէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալու, ինչպէս անցած երեկոյին:

— Տատի ջան, տատի, որ մէկ էլ կը կուռն գալ, ասա ինձ համար էլ մէկ բան ասի, — աղաչեց Նազիկը, և նրանից լետոյ շատ խելօքացաւ:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ:

Ղ Ա Յ Վ Ե

 Ո՞վ էր զահվէյի առաջին խմորը և սովորեցրեց մարդկանց այդ բոյսի ունդը խորովել և նորանից համեղ և անուշահոտ ըմպելիք պատրաստել: Պատմումեն թէ այժն է տուել այդ միտքը մի կրօնաւորին: Ասումեն թէ այդ այժը կերել էր զահվէ բոյսի մսալից պտուղները և սկսել էր ծիծաղաշարժ ոստումներ անել: Կրօնաւորը տեսել է այդ և դիտել, որ զահվէն ունի հոգու աշխուժութեան պահպանելու յատկութիւնը, որ շատ ձեռնտու էր նորան և նորա ընկերներին, որոնց քուռը տանումէր գիշերային աղօթքի ժամանակ: Նա պատրաստեց զահվէյից ըմպելիք և տեսաւ նորա համը:

Այժմս էլ այն երկիրներում, ուր բուսնումէ լաւ զահվէ՝ ինչպէս օրինակ Մէքայում, Հարաւային Արաբիայում, խմելու համար գործ են ածում ոչ թէ պտղի ունդը, այլ նորա մսալից շրջապատեանը, որի մէջ նա

ամփոփած է: Այդ պատեանը խորովում և աղումեն այնպէս, ինչպէս մենք խորովում ու աղումենք ղազվէ ունդը և նորանից պատրաստած ըմպելիքն են խմում: Ղազվէ բոյսի տերւները պարունակումեն իրանց մէջ գրգռիչ յատկութիւն չինական թէյի պէս, այս պատճառով ձավայ և Սումատրայ կղզիներում այդ տերւները թէյի տեղն են գործածում:

Սակայն շուտով միւս կրօնաւորները, որոնց ղազվէյի համը դուր չեկաւ, վճռեցին որ դուրս խմելը մեծ մեղք է, որովհետեւ նոցա կարծիքով ղազվէն թմրեցուցիչ ըմպելիք է, իսկ Մահամեդ մարգարէն արգելած է գործածել որեւէ թմրեցուցիչ ըմպելիք: Եւ որովհետեւ այդ երկրի բնակիչները մահմեդականներ էին, ուստի ղազվէն աղմուկ բարձրացրեց և սուլթանը, որ իւր պետութեան մէջ խռովութիւններ չէր սիրում, արգելեց ղազվէյի գործածութիւնը: Նա հրամայեց գիտնականներին քարոզել ղազվէյի վնասակարութիւնը և նոքա շատ աշխատումէին ապացուցանելու թէ դա վնասակար և «սառն» ու «չոր» ըմպելիք է: Պետութեան մեծաւորներից մէկը, լսելով գիտնականների քարոզները, ծաղրեց և իւր այդ արարմունքի համար ենթարկուեցաւ ֆալախայով ծեծի. սորանով ուղղումէին ապացուցանել թէ նա արդար չէ, այլ թէ գիտնականների ասածներն են ճշմարիտ: Քարոզիչները մեծ ոգևորութեամբ խօսումէին մզկիթներում ղազվէյի դէմ և պնդումէին, թէ այդ ըմպելիքի խմողները Մահամեդի դատաստանի առաջ կը ներկայանան ղազվէյի դիրաից աւելի սեաւ երեսով:

Սորանից լետոյ դեռ էլի շատ երկար ժամանակ քրիստոնեայ քահանաներից շատերը քարոզումէին ղազվէյի գործածութեան վնասակարութիւնը, թէև այդ անում էին նոքա բոլորովին ուրիշ պատճառներով: Եպիսկոպոսը, որ միւսնոյն ժամանակ Պադէբօրնի (Վեստֆալիայում) իշխանն էր, ղազվէն էր մեղադրում, որ նորա հպատակները բոլորն էլ հարուստ չէին: Նա արգելեց

նոցա ղահվէ խմել, համարելով այն աւելորդ շռայլութիւն: Նա կարգեց առանձին աստիճանաւորներ, որոնց պարտաւորութիւնն էր իմանալ թէ որտեղ են եփում այդ ըմպելիքը և ըստ այնմ դատի էին կանչում այդ հրամանը չը կատարողներին: Այս հրամանի պատճառով ամբողջ Վէստֆալիան ապստամբեց. բայց այս անգամ քաղաքացիք ոչ թէ սրով և հրացաններով զինաւորուեցան, այլ ղահվէյի թասերով՝ նոքա երկայն սեղաններ շարեցին հրապարակների վերայ և նստելով նոցա առաջ, խմումէին արգելած ըմպելիքը: Այս անհնազանդութիւնից կատաղած եպիսկոպոսը հրամայեց զօրքին գէնք բարձրացնել և ցրուել անհնազանդ քաղաքացիներին: Քաղաքացիները ոչ թէ հալհոյանքներով հանդիպեցան նոցա, այլ առաջարկեցին քաջ զինուորներին մի քանի թաս թարմ ու անուշահոտ ղահվէյով կտրել իրանց ծարաւը: Երկու պատերազմող կողմերը բարձրաձայն ծիծաղեցան այս արարմունքի վերայ. քաջ զինուորներն անկարող եղան զսպել իրանց այդ գայթակղութիւնից, մեծ համակրութեամբ օգուտ քաղեցին իրանց հակառակորդների սիրալիր առաջարկութիւնից և յաղթուեցան արգելած գէնքից: Եպիսկոպոսը, որ ինքն այս անձամբ տեսաւ, այլևս ոչինչ չը կարողացաւ անել, ուստի բոլորը մոռացութեան տուեց, որովհետև նորա հպատակներն, ինչպէս երևում էր, չէին ցանկանում հարստանալ:

Այսպէս ահա ղահվէյի գործածութիւնը տարածուեցաւ և շատ ձեռներէց անձանց հարստութեան աղբիւր դարձաւ: Մենք այստեղ չենք ուզում խօսել զանազան երկիրների մեծ քաղաքներում գտնուող ղահվէտրների և ոչ վաճառականների մասին, որ ստանում են այդ բերքը տաք երկիրներից նաւերով մեծ տակառների մէջ լցրած, այլ մեր խօսքն է այն արդիւնաբերողների մասին, որ մշակում են ղահվէյի "բոյսը և յետոյ նորանից ժողովում հասունացած պտուղները: Սկզբում ղահվէն մշակում էին միայն նորա հայրենիքում՝ Հարա-

ւային Արաբիայում և Աֆրիկայի մօտաւոր ափերի վերայ. բայց յետոյ սկսեցին մշակել և ուրիշ երկիրներում և այժմ պարապած են այդ բոյսի մշակութեամբ երկրագնդի տաք գօտու ամբողջ տարածութեան վերայ, թէ՛ Ասիայում և Աֆրիկայում, և թէ՛ Ամերիկայում: Եթէ մենք ուզենանք մեզ մօտ բերած ղահվէյի ունդը ցանել, նորանից երբէք բոյս չի դուրս գալ, քանի էլ որ խրնամք տանենք նորա մասին, որովհետև ղահվէյի պտուղները շատ շուտ կորցնում են իրանց արձման զօրութիւնը. ուստի եթէ ցանենք նոցա գետնի մէջ, մի քանի շաբաթ հասունանալուց յետոյ, նոքա այլևս չեն աճում: Այս պատճառով նոր երկրի մէջ այդ բոյսի մշակութիւնն այնքան հեշտ չէ, ինչպէս դուք կարող էք կարծել:

Ղահվէյի ծառը բրգաձև է և ծաղկելիս հեռուից, կարծես թէ, ծածկուած է ձիւնով: Մօտից նայելով այդ ծառն իւր բնական դրութեան մէջ հասնում է 15-ից մինչև 30 ոտնաչափ բարձրութեան. նորա հարթ ու փայլուն տերևները դասաւորած են ճիւղերի վերայ դեմուդեմ (հանդիպակադիր) և մօյգ կանաչ են. այն տեղում, ուր կալածեն տերևները (ծոցերում), նստած են ճիւղերը, այնտեղ էլ նստած են պայծառ սպիտակագոյն և սուր բայց անուշ հոտ ունեցող ծաղիկները:

Ղահվէյի պտուղը միբք է, որ նման է կեռասին, բայց սորանից մանր է: Կեռասից զանազանվում է նոյնպէս նորանով որ անկորիզ է և մէջն ունի երկու հատիկներ, այն է իսկապէս բոլորեցունց լայտնի ղահվէն:

Թէև ղահվէն երկար ժամանակ չէ լինում ծածկուած ծաղիկներով, սակայն նա ծաղկում է տարին մի քանի անգամ: Նորա ծաղկիլը կտրուած է եղանակից և անձրևի քանակութիւնից. այնուամենայնիւ մարտ ամսում նա միշտ ծաղկում է: Ղահվէյի լաւ աճելու և զարգանալու համար հարկաւոր է տաք կլիմայ (այնպէս որ միջին թւով 16 աստիճանից պակաս տաքութիւն չը

լինի, նույնպէս հարկաւոր է որ իւրաքանչիւր օր 10 աստիճանից պակաս տաքութիւն չը լինի): Բացի տաքութիւնից ղահվէն պահանջումէ խոնավութիւն և շուաք. չոր ու բաց տեղերում նա չի կարող աճիլ:

Մշակողի գլխաւոր հոգսն է կտրատել ղահվէ ծառի ճիւղերն այնպէս, որ նա մեծանայ, աւելի լայնանայ քան թէ բարձրանայ, որովհետեւ անյարմար է ժողովել պտուղները բարձր տեղից: Բացի սորանից եթէ տեղն արևադէմ է, ղահվէյի ծառերի շուրջը տնկումեն բարձր ծառեր, օրինակի համար կարմրափայտ ծառը: Այս ծառերը պաշտպանումեն ղահվէյի ծառը նույնպէս սաստիկ, քամիներից, իսկ նոցա տերեւները, վայր ընկնելով պարտաքանդումեն հողը, այս պատճառով էլ թողնումեն գետնի վերայ:

Սեպտեմբերին ղահվէ ծառի պտուղները հասնում են: Պտղակութն սկսվումէ այդ ժամանակից և շարունակվումէ առհասարակ մինչև Յունվար ամիսը. հինգ ամսուայ ընթացքում իւրաքանչիւր օր հաւաքումեն պտուղը և ամէն մի մշակ օրէնը հաւաքումէ 3-ից մինչև 3½ փութ պտուղ:

Սորանից յետոյ սկսումեն բաժանել պտղի միսը ունդից: Այս նպատակի համար կան մի քանի տեսակ եղանակներ: Երբեմն թողնումեն որ պտուղները թառամին և այդ միջոցին մտալից մասը փտումէ. միւս եղանակն այն է, որ պտուղները ճմրտումեն ու տրորում առանձին գործիքների մէջ, որ շատ նման են ազօրիքին, յետոյ պտղից բաժանուած մտալից մասը ջրով լուանումեն: Այս երկու եղանակները թէև շատ պարզ են, բայց և այնպէս ունին և իրանց անյարմարութիւնները. առաջին եղանակի վնասն այն է, որ փտելուց շատ վատ հոտ է գոյանում, որ քաշումեն նոյն իսկ հատիկները. երկրորդին՝ որ ջուրը լուծումէ ունդի սննդարար նիւթերը և այսպիսով նոքա մասամբ կորցնումեն իրանց արժանաւորութիւնը. այս պատճառով

ամենալաւ եղանակն է՝ չորացնել պտուղները որքան կարելի է արագ, թոյլ չը տալով նոցա փտելու: Չորացած և իրանց մսալից մասերից բաժանուած հատիկները ՚ի վաճառ են հանուած: Այժմ հասկանալի է թէ ինչու զանազան տեսակ է լինում ծախու ղահվէն: Ղահվէյի անթիւ տեսակներից ամենալաւը համարվում է մոքայինը (Սրաբիայում). սորա ունդերը մոյգ գեղնագոյն, մանր կլոր հատիկներ են: Արեւմտեան Հնդկաստանինը և շաւայինը—մոքայի տեսակից աւելի խոշոր են և բաց գեղնագոյն. Յէյլօն կղզուց, Բրազիլիայից և Արևելեան Հնդկաստանից եկած ղահվէն կապոյտ կամ գորշ կանաչագոյն է: Ամբողջ երկրագնդի վերայ իւրաքանչիւր տարի գործ են ածում 20 միլիօն փութ ղահվէ:

ԹԱԳԱՒՈՐԻ ՆՈՐ ԶԳԵՍՏԸ

(ԱՆԴԵՐՍԷՆԻ ՀԷՔԻԱԹՆԵՐԻՑ)

Սորանից շատ տարի առաջ մի աշխարհում կար մէկ թագաւոր, որ այնքան սիրում էր նոր նոր զգեստներ, որ պատրաստ էր իւր բոլոր հարըստութիւնը ծախս անել իւր զարդարանքի համար: Նա չէր հոգում իւր զօրքի համար, ուշք չէր դարձնում թատրոնին և զբօսնելու էլ դուրս էր գնում ամէն անգամ իւր նոր զգեստները ցոյց տալու համար միայն: Օրը տասն անգամ փոխում էր իւր հագուստը և բոլոր ժամանակը պարապում էր միայն շորերը փոխելով ու զարդարուելով:

Իւր թագաւորանիստ քաղաքում ամէն օր գալիս էին շատ օտարազգիք: Մի անգամ եկան այնտեղ երկու

խաբեբայ մարդիկ և սուտ ասացին, թէ իբր իրանք ոստայնակներ են և գործում են ամենաազնիւ կերպասներ, թէ այդ կերպասների թէ նկարները և թէ գոյնը հիանալի է և թէ նորանից կարած հագուստը մի զարմանալի յատկութիւն ունի, այն է, որ անտեսանելի է այն մարդու աչքին, որ իւր պաշտօնի համար անյարմար է և կամ անչափ յիմար է:

— Ի՞նչ հիանալի զգեստ կրլինի, մտածեց թագաւորը: Եթէ ես ունենայի այդպիսի մի հագուստ, ես կարող էի իմանալ թէ որոնք են իմ տէրութեան մէջ իրանց պաշտօնի համար պիտանի մարդիկ և կիմանայի թէ որն է յիմարը, և որը խելօքը: Այո՛ պէտք է որ խոյնդներ զործեն ինձ համար այդ կերպասից:

Եւ նա հրամայեց կանխիկ շատ փող տալ այն խաբեբաներին, որ նոքա շուտով սկսեան գործը:

Խաբեբաները նստոտեցան դաստկահի առաջ եւ այնպէս էին ձևացնում իբր թէ գործում են, բայց գործիքի մէջ բոլորովին ոչինչ չըկար: Անդադար պահանջումէին որ տան իրանց ամենաազնիւ մետաքս և ոսկի. և այս բոլորը նոքա դնումէին իրանց զրպանը և առաւօտից մինչև երեկոյ նստած էին դատարկ դաստկահի առաջ և իբր թէ բանում:

— Ես ցանկանում եմ իմանալ, թէ արդե՞օք ինչ տեղն է հասել գործը, մտածում էր թագաւորը: Բայց սարսափը բռնում էր նորան, երբ յիշում էր, որ այդ կերպասն անտեսանելի է յիմար և իւր պաշտօնին անյարմար մարդուն: Նա ուզեց ուղարկել առաջ իւր մօտիկ մարդկանցից՝ կերպասը տեսնելու: Մայրաքաղաքի բոլոր բնակիչները գիտէին նոր կերպասի զարմանալի յատկութիւնը և ամէն մէկն անհամբերութեամբ կամենում էր իմանալ թէ իւր զրացիներին որը խելօք է և որը յիմար:

— Կուղարկեմ ոստայնանկների մօտ իմ ծերունի, լարգելի նախարարին, մտածեց թագաւորը: Նա ամէնից լաւ կը տեսնէ կերպասը, որովհետեւ և՛ խելօք է,

և՛ իւր պաշտօնին բոլորովին արժանի:

Գնաց նախարարը և մտաւ այն սենեակը, որտեղ նստած էին խաբեբաները, ձևացնելով իբրեւ թէ բան են շինում: «Տէր ողորմես» մտածեց նախարարը, աչքերը շփելով, «ես ոչինչ չեմ տեսնում»: Բայց այս բանը նա միայն մտածեց, իսկ խօսքով ոչինչ չասաց:

Խաբեբաները խնդրեցին նորան մօտից նայել և հարցրին թէ արդեօք հաւանումէ նա նկարը և գոյնը: Նոքա ցոյց տուին նորան դատարկ դաստկահները և խեղճ ծերունի նախարարը շատ շփեց աչքերը, բայց ոչինչ չըտեսաւ, որովհետեւ ոչինչ էլ չըկար: «Տէր Աստուած, մտածեց նա, մի՞թէ ես յիմար եմ: Այս անկարելի է և ոչ ոք այդ չըպիտի իմանայ: Մի՞թէ 'ես անպիտան եմ պաշտօնիս համար: Ո՛չ, ես ոչոքի չեմ ասելու թէ կերպասը չեմ տեսնում»:

— Ի՞նչպէս էք կարծում. հարցրուց նորան ոստայնանկներից մէկը:

— Շատ գեղեցիկ և աննման է, պատասխանեց նախարարը, ակնոցների միջից նայելով: Ի՞նչ գեղեցիկ են նկարները, գոյնը: Այո՛, ես յայտնելու եմ թագաւորին, որ ձեր ձեռագործը ես շատ եմ հաւանում:

— Շատ շնորհակալ ենք, ասացին ոստայնանկները և սկսեցին պատմել և նկարագրել կերպասի գեղեցկութեան մանրամասնութիւնները: Ծերունի նախարարն այնպէս էլ համբաւ տարաւ թագաւորին:

Այնուհետեւ խաբեբաները պահանջեցին իրանց համար աւելի փող, մետաքս և ոսկի: Եւ այս բոլորը նոքա առաջուան պէս դրեցին իրանց գրպաններում, բայց դաստկահում ոչ մի թել չէր երևում և այնուամենայնիւ նոքա շարունակումէին ձևացնել իբր թէ բանում են:

Թագաւորը յետոյ ուղարկեց կրկին մի այլ պաշտօնատէր մարդ՝ իմանալու գործի դրութիւնը և թէ արդեօք պատրաստ է թէ ոչ կերպասը: Այս պաշտօնատէրը

նմանապէս ոչինչ չըտեսաւ, որովհետեւ ոչինչ չըկար գործիքների մէջ:

—Տեսնո՞ւմէք, ասացին նորան խաբեբաները, ի՞նչ գեղեցիկ կերպաս է և սկսեցին նկարագրել չեղած նկարները և գոյնը:

—Ես չիմար չեմ. մտածեց ինքն իրան այդ պաշտօնատէրը. բայց երևի անյարմար եմ պաշտօնիս համար: Բայց այդ բանը ես ոչոքի իմաց չեմ տալ:

Եւ սկսեց գովել երեւակայելի կերպասը և հիանալ նորա գեղեցկութեան վերայ:—Այո՛, այդ մի հրաշալի կերպաս է, ասաց նա թագաւորին:

Քաղաքում ամէնքը խօսումէին այդ հրաշալի կերպասի մասին:

Վերջապէս թագաւորն էլ կամեցաւ տեսնել կերպասը: Իւր պալատականների հետ միասին, որոնց թւումն էին և այն երկու բարձր պաշտօնատէր անձինք, դնաց նա այն խորամանկ ոստայնակների մօտ: Երբոր նոքա տեսան թագաւորին, աւելի և աւելի ջերմեռանդութեամբ սկսեցին բանել առանց մի թելի:

—Տեսնո՞ւմէք ինչպէս գեղեցիկ է կերպասը, ասացին թագաւորին այն առաջին բարձր պաշտօնատէր անձինք, որ արդէն առաջ եղել էին այնտեղ: Նայեցէք, Զերդ Մեծութիւն, ինչ հիանալի են նկարները, գոյնը:

Եւ նոքա մատով ցոյց էին տալիս դատարկ մեքենան:

—Այս ի՞նչ է նշանակում, մտածեց թագաւորը: Ես բան չեմ տեսնում: Այս սարսափելի է: Մի՞թէ ես չիմար եմ: Մի՞թէ ես անպիտան թագաւոր եմ: Այս ամենամեծ տարաբախտութիւն կըլինի ինձ համար:—Այո՛, ասաց նա բարձրաձայն, շատ գեղեցիկ է: Ես շատ հաւանումեմ:

Նա քաղցրութեամբ նայումէր խաբեբաներին և երեւակայելի ձեռագործին, չըկամենալով ասել թէ ոչինչ չէ տեսնում: Բոլոր պալատականները նմանապէս

նայումէին ոչինչ չըտեսնելով, բայց ամէնքը միաբերան վկայումէին որ «հրաշալի է, հիանալի է», խորհուրդ տալով թագաւորին շուտով մի զգեստ կարել տալ այդ նոր կերպասից: Ամէնքը փառաբանումէին ոստոյնասնկներին և թագաւորն էլ նոցա պատուելու համար պալատական ոստայնանկ նշանակեց նոցա:

Մի հանգիսաւոր օր թագաւորը պիտի հազներ այդ կերպասից կարած շորերը: Եւ խաբեբաները գիշեր ցերեկ աշխատումէին շուտով վերջացնել իրանց գործը: Նոքա ձևացնումէին թէ իբր արդէն վերջացրել են ամէն բան, յետոյ ձևումեն հագուստը, մեծ մկրատով իբր կտրտում, կարումեն առանց թել ասեղով և վերջապէս ասացին թէ «զգեստը պատրաստ է»:

Թագաւորն իւր պալատականներով գնաց նոցա մօտ: Խաբեբաները բարձրացրին իրանց մի մի ձեռքը օդում, իբր թէ բան ունին բռնած և ասացին՝ ահա անդրավարտիկը, ահա պարեգօտը, ահա և վերարկուն: Այս զգեստը թեթեւ է սարդի ոստայնի պէս. երբ որ մարդ հագնի, կարելի է կածել թէ ոչինչ չէ հագել. բայց հէնց այդ է դորա գեղեցկութիւնը, արժանաւորութիւնը»:

—Այո՛, ասացին պալատականները, բայց ոչինչ չը տեսան, որովհետեւ տեսնելու բան չըկար:

—Այժմ կրկամենա՞ք ձեր շորերը հանել և այս նոր շորերը հագնել, ասացին խաբեբաները թագաւորին: Մենք կըհագցնենք նոր շորերը մեծ հայելու առաջ:

Թագաւորը հանեց իւր սովորական շորերը և խաբեբաները ձևացնումէին իբր թէ հագցնումեն նոր շորերը: Այդ ժամանակ թագաւորը շուռ ու մուռ էր գալիս հայելու առաջ:

—Այո՛, ասումէին ներկայ եղողները, գեղեցիկ ըզգեստ է և ինչ սիրուն էլ նստած է:

—Ամպհովանին արդէն պատրաստ է և ժողովուրդըն սպասում է, յայտնեց կարգապահ պաշտօնաւորը:

— Ես պատրաստ եմ, ասաց թագաւորը: Դալիս եմ:

Պալատականները, որ պիտի բռնէին թագաւորի քղանցքը, ձեռներով իբր թէ բռնեցին երեւակայելի հագուստի ծայրերը, չըկամենալով ցոյց տալ որ իրանք բան չեն տեսնում:

Եւ այսպէս թագաւորը գնումէր փառաւոր ամպ-հովանու տակ և քաղաքի բոլոր բնակիչները միաձայն գոչումէին փողոցներում և պատուհաններից «Տէր Առտուած, ինչ հիանալի է թագաւորի նոր զգեստը, ի՞նչ սիրուն քղանցք ունի և ինչպէս սիրուն էլ նստած է»: Բայց ոչ ոք չէր համարձակվում ասել թէ ոչինչ չէ տեսնում, որ չասեն թէ նա յիմար է և իւր պաշտօնին անյարմար:

— Մեր թագաւորն այսօր ինչո՞ւ է դուրս եկել համարեա՞ թէ մերկ, գոչեց մի երեխայ:

— Լսո՞ւմէք անմեղ երեխայի ձայնը, ասաց նորա հայրն իւր մօտիկ եղողներին և ամէնքն սկսեցին հաղորդել միմեանց ցած ձայնով երեխայի առածը:

— Չէ՞ որ թագաւորը համարեա՞ թէ մերկ է, գոչեց բոլոր ժողովուրդը: Այս ձայնը զայրացրուց թագաւորին, որովհետեւ տեսաւ որ աղաղակ հանողներն արգար էին: Բայց նա մտածումէր ինքն իրան՝ «չլսէտք է ցոյց տալ սխալը». իսկ պալատականները շարունակումէին գնալ աւելի ջերմեռանդութեամբ, ձեւացնելով թէ իբր բռնած ունին թագաւորի երեւակայական զգեստի քղանցքը:

Թարգ. Գ. Տ. Ա.

ԶՈՒԱՐՃԱԽԲ, ՀԱՆՆԵՆՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ:

Երրորդ համարի մէջ գտնուած զուարճալիքների բացատրութիւնները:

- 11) Յ-աջ-օղ-Տ-իւն-կ-ցանկ-անք-ամ-սագ-րիդ:
(Յաջողութիւն կցանկանք ամսագրիդ:)
- 12) Հա-ցուպ-Անի-ր-կեռ-ու-բան իր:
(Հաց ու պանիր, կեր ու բանիր:)
- 13) Մէկ-մարդ-ի-փողեր-ը-որ-աւել-նատան-սներ-ը-ծ-ուռ-ը-կ-երեւան:
(Մէկ մարդի փողերը որ աւելնայ, տան սները ծուռը կերեւան:)

	1)	2)	3)																											
14)	<table><tr><td>2</td><td>5</td><td>2</td></tr><tr><td>5</td><td></td><td>5</td></tr><tr><td>2</td><td>5</td><td>2</td></tr></table>	2	5	2	5		5	2	5	2	<table><tr><td>3</td><td>3</td><td>3</td></tr><tr><td>3</td><td></td><td>3</td></tr><tr><td>3</td><td>3</td><td>3</td></tr></table>	3	3	3	3		3	3	3	3	<table><tr><td>4</td><td>1</td><td>4</td></tr><tr><td>1</td><td></td><td>1</td></tr><tr><td>4</td><td>1</td><td>4</td></tr></table>	4	1	4	1		1	4	1	4
2	5	2																												
5		5																												
2	5	2																												
3	3	3																												
3		3																												
3	3	3																												
4	1	4																												
1		1																												
4	1	4																												

15)	2	7	6
	9	5	1
	4	3	8

- 16) Թութակ:
- 17) Մեծ պտպ, պապ, հայր, որդի:
- 18) Թամար:
- 19) Պատասխանող տիկինը պարօնի մայրն էր:
- 20) Քո մի խօսքը երկու բառից,
Որ դարձել է մեզ սիրելի,
Թէ թույլ կը տաս ինձ ասելու,
Կասեմ՝ է «մայրենի լեզու»:
Առաջին մասն է «մայր» ծնող,
Երկրորդն է «եջ» տառ ձայնաւոր,
Երրորդն է «նիլ» եզիպտոսում,
Թէպէտ մենք Նեղոս ենք ասում.
Չորրորդն է «եզ» ժիր աշխատող,
Գիւղացու կեանքը պահպանող.
Վերջի գիրն է «ու» ձայնաւոր,

Որ գրվում է երկու տառով:
Ահա գտանք և խմացանք,
Բացատրելու կարօտ չեղանք:
Ղ.*

(Առաջ. ներ. Դպր. 6 7 դաս. աշ. Թ. Առողմեան)

21)



այ

որ

1, 9 ԻՍ



22) Առաջ. Ա. Բ.



,



իզ



8 Ի,

չիմա



23) Առաջ. Ա. Բ.

1

Ծաղ




ղառիկ
(արեւելի)



ՄԵՂԻ

24)



Ներկայ աղիւսակի մէջ գրել հետեւալ տառեր՝ 6-ա, 2-կ, 2-հ, 2-դ, 1-մ, 2-ւ, այնպէս որ եթէ կարգացունին վերեւից ներքեւ և ձախից աջ, նշանակութիւն ունենան:

25) Առաջինը հարստութիւն է ցոյց տալիս, երկրորդը — սալի մի մասն է. իսկ ամբողջը Հայաստանի մի քաղաք է: Գտէք ի՞նչ է:

26) Տօր խաղ արա, բեր կախ արա, իմացէ՛ք ի՞նչ է:

27)

o	o	o	o	o	o
o	o	o	o	o	o
o	o	o	o	o	o
o	o	o	o	o	o
o	o	o	o	o	o
o	o	o	o	o	o

 Ներկայ 36 հատ օղակներից հարկաւոր է հանել 6 հատ այնպէս, որ հանելուց յետոյ ամէն կարգի մէջ էլի մնալ զոյգ թիւ ներքեւից վերեւ և աջից ձախ հաշուելով:

28) Առաջին վանկը ժամանակ է ցոյց տալիս, երկրորդը — թթու դնելու մի բոյս է, իսկ ամբողջը մարդկանց բազմութիւն է:

ԽՄԲԱԴԻՐ — ՀՐԱՏԱՐԱԿՈՂ, Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 14 Ноября 1882 г.

Типография М. Варганияца и К. противъ Троиц. церк.

Չաք. Գրիգորեանցի «Արկատեան» գրա- վաճառանոցի հրատարակութիւնները.

Արիմեանց, Գ.—Նալա և Դամայեանտի	20 Կ.
Ա. Մ. Ն. Պ.—Իիւցազունք՝ Հայկ, Արամ. Վահագն.	30 —
Բահաթրեանց Ա.—Այբբենարան. գրել և կարդալ սովորեցնելու նիւթը	4 —
Բահաթրեանց Ա.—Քերականութիւն աշխարհիկ լեզ.	25 —
Պրչագիր օրինակներ երկու տե.	—
Սակ. իւրաքանչ.	20 —
Գրիգորեանց Չ.—Մարդակազմութեան տարրական դասեր. պատկերազարդ.	50 —
Դամառ-Քաթիպայ—Մանկական ոտանաւորներ և երգեր.	20 —
Երզնկեանց—Մանկական երգեր և պարերգեր	20 —
՝ — Չայնագրեալ մանկական երգեր	40 —
՝ — Դասագիրք Չայնագրութեան	30 —
Թագւորեան — Փորձ լեզուագիտական հետազոտութեանց Ծերենց—Թորոս Լիւնի	50 —
՝ — Երկունք 9 դ. դարու	1 " —
՝ — Թեոգորոս Ռչտունի	1 " —
Ղուկասեանց—Դասագիրք Ընթերցանութեան	40 —
՝ — Ընդհանուր պատմութիւն. հին դար.	80 —
Միրիմանեանց—Թուաբանութեան խնդիրներ	12 —
Նազարեանց—Պօլուիմպերիայ, մանկական թատրօն	20 —
Սիմօնեանց Պ — Սրբազան Պատմութիւն հին կտակար.	60 —
Սիմօնեանց Ս. — Ժողովածու թուաբան. խնդ. ա. մ.	60 —
՝ ՝ ՝ Դասագիրք Թուաբանութեան	50 —
Սիմօնեանց Ն. — Ընդհանուր աշխարհագրութիւն ա. մ.	65 —
՝ ՝ ՝	35 —
՝ ՝ ՝	բ. մ. — 60 —
՝ ՝ ՝	գ. մ. — 60 —
Նազարեանց ՝ Հայոց Լեզուի Ուսուցիչ բ. տարի	25 Կ.

ՄԱՄԱՌԼԻ ՏԱԿ ԵՆ՝

Երզնկեանց—Չայնագրեալ երգարան.

Գրիգորեանց—Նախապատրաստական բերանացի զրոյցներ
ծնողաց և ուսուցիչների համար մ. ա.

Մի եւ նոյն աեղը վաճառութեան հետեւեալ նոր
հրատարակութիւնները՝

Բահաթրեանց—Ուղեցոյց հայ ուսուցչի	1 " —
՝ — Հոգեբանութիւն	1 " —
՝ — Ընթերցարան	20 Կ. —
Խաթիսեանց—Մանկավարժական Խորհրդածութիւններ	60 Կ. —

Ներկայ 1882 թուականին լրա-
նում է **„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“**
լրագրի 25 ամեայ գոյութիւնը: Եյս
երկոյթը նշանաւոր համարելով Հա-
յոց գրականութեան մէջ մի խումբ
համակրողների կամենում է ղեկաւե-
րերի 12-ին տօնել լրագրի գոյութեան
25-ամեայ յօբելեանը: Յանկացողք
մասնակցել այդ տօնախմբութեանը
հրաւիրւում են ստորագրուիլ մինչև
ղեկաւեմբերի 5-ը Օ. Գրիգորեանի
գրաւաճառանոցումը և պ. Հասկեր-
դեանի պապիկիօնումը: